# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԵԱՃԱՊՁԲ-2026/Հ-22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | տաբատներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Տաբատ՝ ամառային սև: Գունային կոդը՝ ըստ PANTONE տեքստիլ կատալոգի 19-0303 TPX կամ NCS գունային կատալոգի S 9000-N: Ուղիղ կտրվածք՝ գոտկատեղով: Կտորի բաղադրությունը՝ պոլիէսթեր - 65±5%, բամբակ - 35±5%): Մակերեսային խտությունը 220±10 գ/մ2: Գործվածքը պետք է հյուսված լինի ռիպստոպ (rip-stop) նախշով: Գոտկատեղի լայնությունը 5.0 (±0.3) սմ: Գոտին ամրացվում է առջևից՝ դրսից՝ մուգ գույնի մետաղական կոճգամով, ներսից՝ Ø 1,5 (±0,2) սմ կոճակով: Նույն գործվածքից պատրաստված յոթ օղակ կարված է գոտկատեղին՝ գոտի կապելու համար: Առջևի (երկու) և հետևի (երեք) կողմերի լայնությունը 4,5 (±0,2) սմ է, կողայինները (մեկական) 2,0 (±0,2) սմ: Օղակների բացվածքը՝ 7 սմ է: Տաբատի գոտկատեղը կարգավորվում է առանձգական ժապավեններով և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կոճակներով։ Էլաստիկը պետք է ունենա 3±0,1 սմ լայնություն, առնվազն 11 սմ երկարություն, ժապավենը պետք է լինի հիմնական գործվածքից։ Տաբատի առջևի հատվածն ամրացվում է պլաստիկ կայծակաճարմանդով։ Կայծակաճարմանդի երկարությունը 16±0,5 սմ է, ատամների լայնությունը՝ 0,6 (±0,2) սմ։ Գոտկատեղից ներքև՝ տաբատի առջևի մասում, կան երկու անկյունագծային, ներդիր, ձևավորված գրպաններ և ևս երկու գրպաններ՝ հետևի մասում կափարիչներով, որոնք ամրացվում են երկու կպչուն ժապավեններով։ Տաբատի կողքերին կարվում են ևս երկու լայնածավալ վրադիր գրպաններ՝ կափարիչներով։ Գրպաններն ամրացվում են երկու կպչուն ժապավեններով։ Ծնկներին և հետույքի հատվածում կարվում են հավելյալ դետալներ հիմնական գործվածքից։ Ծնկների հակառակ կողմը մշակվում է էլաստիկ կտորով։ Տաբատի ներքևի մասը ավարտված է ծայրի կարով, որի մեջ մտցվում է առաձգական պարան՝ տաբատի ներքևի մասի լայնությունը հարմարեցնելու համար։ Տաբատի ներքևի մասում կան երկու անցք՝ առաձգական լարը անցկացնելու համար։ Տաբատի կարերը պետք է լինեն ամուր, կարված շղթայով, իսկ ծայրերը՝ ամրացված։ Բացի այդ, կարերի ծայրերը ամրացվում են ամրացումներով (հատուկ մեքենա)՝ վրադիր գրպանների անկյուններում, առջևի գրպանների անկյուններում, կափարիչների անկյուններում։ Տաբատի կողային կարերը, առջևի և հետևի եզրերը ավարտվում են երեք կարով, մնացած կարերը՝ երկու կարով։ Կոճակներ և կոճգամները՝ սև։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Կոճգամները պետք է լինեն մետաղական, մուգգույնի, դիմացկուն մթնոլորտային ազդեցություններին (չժանգոտվող պողպատ) Ø 1,4 սմ: Պարանը պետք է լինի կլոր, սև կամ նույն գույնի, ինչ հիմնական գործվածքը: Կարի թելի գույնը պետք է համապատասխանի գործվածքի գույնին, թելը պետք է լինի պոլիեսթեր, ամրացված և դիմացկուն մթնոլորտային ազդեցություններին: Հարդարման կարերի խտությունը 3–4 կար/1սմ է: Գործվածքը պետք է հյուսված լինի ռիպստոպ (ripstop) օրինակով: Գրպանի պայուսակներ` հիմնական գործվածք: Փաթեթավորումը` ստվարաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ` 1 հատ: Արկղերը` պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ` գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | |